ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ կնիքների և դրոշմակնիքների պատրաստման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 30.06.2017թ. N 71/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Ա.Եղիազարյանը, Մ.Սարդարյանը, Ա.Հայրապետյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ-ն (ք. Երևան, Արշակունյաց-5)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1. «Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթերում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ
		«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ	«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ
1	Տեքստ պարունակող դրոշմակնիքների պատրաստում	480 000	480 000
2	Տեքստ պարունակող կլոր կնիքների պատրաստում	420 000	420 000

*«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ-ն ԱԱՀ վճարող չէ

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշման 41-րդ կետը՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Արշակ Կիրակոսյան Փայլակի» Ա.Ձ-ի հայտը մերժել՝ քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթերում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները):

-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Ա.Եղիազարյան

Մ.Սարդարյան

Ա.Հայրապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան